ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛ.
МУНИЦИПАЛИТЕТ с. АЙГЕШАТ

Հայաստանի Հանրապետություն
Արմավիրի մարզ, գ. Այգեշատ
հեռ. (0237) 71 – 7 – 51
էլ. հասցե aygeshatarm@mail.ru

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
Армавирская обл. С.Айгешат
Тел. (0237) 71 – 7 - 51
эл. почта aygeshatarm@mail.ru

«08» 01 2018թ. N 03

Արմավիրի մարզպետ

պարոն՝ Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի (Արմավիր) գյուղական համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27 – ին կայացած թիվ 10 նիստի որոշումները:

Առդիր՝ 4 թերթ:

Այգեշատի (Արմավիր) գյուղական համայնքի ղեկավար՝ Ա. Մխիթարյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.6/138-18
10 01 2018 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՇԱՏԻ (ԱՐՄԱՎԻՐԻ)
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեշատ (Արմավիրի) համայնք, փողոց 3 N 9 շենք

ՈՐՈՇՈՒՄ

«27» դեկտեմբերի 2017 թվականի N 30
ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6 – րդ մասով.

Ավագանին որոշում է .

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի (Արմավիր) գյուղական համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 10 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (6) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Ա. Դիդարյան
Ն. Գրիգորյան
Զ. Ոսկանյան
Թ. Մխիթարյան
Ռ. Հասոյան
Վ. Հունանյան

Այգեշատ (Արմավիր) գյուղական համայնքի ղեկավար՝ Ա. Մխիթարյան
2017 թվական դեկտեմբերի 27
գ. Այգեշատ (Արմավիրի)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՇԱՏԻ (ԱՐՄԱՎԻՐ) ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեշատ (Արմավիր) համայնք, փողոց 3 N 9 շենք

ՈՐՈՇՈՒՄ

«27» դեկտեմբերի 2017 թվականի N 31 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՇԱՏԻ (ԱՐՄԱՎԻՐ) ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14 – Ի N 44–Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 – րդ հոդվածի առաջին մասի 5 – րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 – րդ հոդվածով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56 – րդ հոդվածի երկրորդ մասով.

Ավագանին որոշում է .

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի (Արմավիր) գյուղական համայնքի 2016 թվականի դեկտեմբերի 14 – ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի (Արմավիր) գյուղական համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 44 – Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները:

   1) Բյուջեի եկամտային մասում՝ հատված 1 – ում «Հողի հարկ համայնքի վարչական տարածքներում գտնվող հողերի համար» տողը պակասեցնել 1800.0 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամով:
   2) Բյուջեի եկամտային մասում՝ հատված 1 – ում «Գույքահարկ փոխադրամիջոցների համար» տողը պակասեցնել 200.0 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամով:
   3) Բյուջեի եկամտային մասում՝ հատված 1 – ում «Վարչական գանձումներ» տողը պակասեցնել 300.0 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամով:
   4) Բյուջեի ծախսային մասում՝ 01 բաժին 1 խումբ 1 դաս 4264 հոդվածը պակասեցնել 800.0 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամով :

5) Բյուջեի ծախսային մասում, որպես նախորդ տարիների ծախս՝ 05 բաժին 1 խումբ 1 դաս 4213 հոդվածը պակասեցնել 1500.0 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամով :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10 – րդ օրը :

Կողմ(6) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Ա. Դիդարյան
Ն. Գրիգորյան
Զ. Ոսկանյան
Թ.Մխիթարյան
Ռ. Հասոյան
Վ. Հունանյան

Այգեշատ (Արմավիր) գյուղական համայնքի ղեկավար՝ Ա. Մխիթարյան

2017 թվական դեկտեմբերի 27

գ. Այգեշատ (Արմավիր)

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Այգեշատի գյուղական
համայնքի ավագանու
2017 թվականի դեկտեմբերի «27» ի
թիվ 30 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

1. Թիվ 10 նիստի օրակարգը հաստատելու մասին

   Զեկուցող՝ Ա.Մխիթարյան

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի /Արմավիր/ գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 14 - ի N 44 – Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին՝

   Զեկուցող՝ Ա.Մխիթարյան